## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ

## ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

---

**գ. Լոռի Բերդ** **« 25 » հունիսի 2024թ.**

## Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն  ԹԻՎ 7

## ԱՎԱԳԱՆՈՒ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ

Կայացավ ՀՀ Լոռու մարզի Լոռի Բերդ համայնքի ավագանու 2024թ. չորրորդ նստաշրջանի հունիսի 25-ին ժամը՝ 12:00-ին հրավիրված հերթական նիստը:

Նիստի հեռարձակումը տեխնիկական խնդիրների պատճառով հեռարձակվում է համայնքապետարանի պաշտոնական ֆեյսբուքյան էջով:

Նիստին ներկա էին Լոռի Բերդ համայնքի ավագանու տասնմեկ անդամները, բացակա էին Հարություն Պայյանը, Կարլեն Վերմիշյանը, Աննա Գրիգորյանը և Անի Սերոբյանը:

**<u>Նիստը վարեց՝ Լոռի Բերդ համայնքի ղեկավար՝ Արայիկ Ներսիսյանը:</u>**

**<u>Նիստը արձանագրեց՝ Լոռի Բերդի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար՝ Անի Մարտիրոսյանը:</u>**

Համայնքի ղեկավար Ա. Ներսիսյանը ներկայացրեց նիստի օրակարգը, որտեղ տեղ էին գտել հետևյալ հարցերը.

**<u>Լսեցին՝</u>**

### ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՉՈՐՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

<u>Զեկ./Արայիկ Ներսիսյան/</u>

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 62-րդ հոդվածով և 14-րդ հոդվածի 6-րդ կետով, 16-րդ հոդվածի 5-րդ մասով՝

**<u>ավագանին որոշեց՝</u>** Հաստատել ՀՀ Լոռու մարզի Լոռի Բերդ համայնքի ավագանու 2024 թվականի չորրորդ նստաշրջանի հերթական նիստի՝ հունիսի 25-ի նիստի օրակարգը՝ համաձայն ստորև ներկայացված տեսքի.

## ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 25-Ի ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳ

**1)** Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Լոռի Բերդ համայնքի ավագանու չորրորդ նստաշրջանի հերթական նիստի՝ հունիսի 25-ի նիստի օրակարգը հաստատելու մասին:

**2)** Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Լոռի Բերդ համայնքի 2024 թվականի հողային հաշվեկշիռը հաստատելու մասին:

**3)** «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Լոռի Բերդ համայնքի խնամակալության և հոգաբարձության հանձնաժողով ստեղծելու մասին» Լոռի Բերդ համայնքի ավագանու 2022 թվականի դեկտեմբերի 23-ի թիվ 65-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին:

**4)** Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Լոռի Բերդ համայնքի ավագանու հինգերորդ նստաշրջանի հերթական նիստի գումարման օրը և ժամը սահմանելու մասին:

**<u>11 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ:</u>**

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 40-Ա/

Համայնքի զինանշանը հաստատելու մասին հարցը ավագանու առաջարկությամբ դուրս եկավ օրակարգից և առաջարկվեց համայնքի ղեկավարին մինչև հաջորդ նիստը հայտարարել համայնքի զինանշանի մրցույթ, այնուհետև լավագույն առաջարկները կքննարկվի ավագանու առաջիկա նիստում: Ավագանին առաջարկեց 1-ին և 2-րդ տեղեր զբաղեցրած մասնակիցներին համայնքի ղեկավարի որոշմամբ տրամադրել դրամական մրցանակներ՝

1-ին տեղ – 40.000 (քառասուն) հազար

2-դ տեղ – 20.000 (քսան) հազար

**<u>Լսեցին՝</u>**

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՂԱՅԻՆ ՀԱՇՎԵԿՇԻՌԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

<u>Զեկ./Լևոն Մամաջանյան/</u>

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 31-րդ կետի պահանջներով և հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետության հողային հաշվեկշիռը կազմելու կարգը հաստատելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության 2000թ. հոկտեմբերի 23-ի թիվ 656 որոշման 9-րդ կետի պահանջները՝

**ավագանին որոշեց՝** Հաստատել՝ Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Լոռի Բերդ համայնքի 2024 թվականի հողային հաշվեկշիռը համաձայն՝ հավելվածի:

**11 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ:**

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 41-Ա/
Հավելվածը կցվում է:

**Լսեցին՝**

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԽՆԱՄԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԵՎ ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2022 Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 23-Ի ԹԻՎ 65-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Զեկ. /Անի Մարտիրոսյան/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ և 42 կետերով, ինչպես նաև հաշվի առնելով ՀՀ երկրապահ կամավորական միության Ստեփանավանի տարածքային բաժանմունքի նախագահի գրությունը՝

**ավագանին որոշեց՝** Լոռի Բերդ համայնքի խնամակալության և հոգաբարձության հանձնաժողով ստեղծելու մասին Լոռի Բերդ համայնքի ավագանու 2018թ. հուլիսի 13-ի թիվ 27-Ա որոշման 1-ին և 4-րդ ենթակետերը շարադրել նոր բովանդակությամբ.
« 1. Աննա Դավթյան Խորենի – առաջատար մասնագետ, համայնքապետարանի սոցիալական աշխատող »:
« 4. Աննա Ասրյան Տիգրանի – ավագանու անդամ »:

**11 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ:**

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 42-Ա/

**Լսեցին՝**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՀԻՆԳԵՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ԳՈՒՄԱՐՄԱՆ ՕՐԸ ԵՎ ԺԱՄԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Զեկ. / Անի Մարտիրոսյան /

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 62-րդ հոդվածով՝

**ավագանին որոշեց՝** Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Լոռի Բերդ համայնքի ավագանու չորրորդ նստաշրջանի հերթական նիստի գումարման օրը սահմանել՝ 2024 թվականի սեպտեմբերի 10-ը, ժամը՝ 12:00-ն:

**11 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ:**

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 43-Ա/

Համայնքապետարանի աշխատակազմի գլխավոր մասնագետ Մարգարիտա Հովսեփյանը ներկայացրեց 2024թ. վճարված սոցիալական օգնությունների և դրամական մրցանակների մասին հաղորդում՝ 10.06.2024-25.06.2024թթ. ժամանակահատվածի դրությամբ և 2024թ. տարեսկզբից.

2024թ վճարված սոց վճարների և դրամական մրցանակների մասին հաղորդում

| Սոց. վճարի տեսակը | 10.06.2024- 25.06.2024 | | 2024թ. տարեսկզբից | |
|---|---|---|---|---|
| | Սոց. Վճար ստացած անձանց քանակը | Գումարը /հազ.դրամ/ | Սոց. Վճար ստացած անձանց քանակը | Գումարը /հազ.դրամ/ |
| Երեխայի ծննդյան կապակցությամբ | 2 | 70,0 | 25 | 880,0 |
| հուղարկավորության կազմակերպման համար | 4 | 160,0 | 32 | 1 280,0 |
| սոցիալական հատուկ արտոնություններ, այդ թվում | 3 | 60 | 96 | 1830 |
| նորակոչիկ զինվորի երդման արարողությանը մասնակցելու համար | | | 6 | 240,0 |
| Հավաքների մասնակցության համար | 3 | 60,0 | 42 | 840,0 |
| Այլ | | | 6 | 240,0 |
| Մայիսի 9-ի կապակցությամբ | | | 1 | 100,0 |
| Վերջին զանգի կապակցությամբ | | | 41 | 410,0 |
| Ընդամենը սոց վճար | 9 | 290,0 | 153 | 3 990,0 |
| Այլ մշակութային կազմակերպություններ նախահաշվով վճարված դրամական մրցանակներ | | | 7 | 280,0 |

*Նիստի փակում*:

Ավագանու անդամներ՝

Ներսիսյան Արայիկ Մենժիկի

Վարդումյան Հայկ Վազգենի

Պապիկյան Վահրամ Ռոմիկի

Ներսեսյան Իրինա Վազգենի

Չիբուխչյան Արման Հրաչիկի

Մարգարյան Սիլվա Ստեփանի

Սիմոնայան Անահիտ Բաբկենի

Շահնազարյան Թամարա Էդիկի

Չատինյան Վանո Վալերի

Գևորգյան Միշիկ Մարտիկի

Ասրյան Աննա Տիգրանի

Լոռի Բերդ համայնքի ղեկավար՝

Արայիկ Ներսիսյան ______________

*Նիստը արձանագրեց*՝ Անի Մարտիրոսյանը ______________

Կ.տ.